

ԵՐԱՆԵԼԻ ՕԳՈՍՏԻՆՈՍՆ ԸՆԴԴԷՄ ՆԻՑՇԷԻ

Անցեալ դարի վերջերին մարդկային մտածողութեան ուրոյն եւ ինչ-որ առումով սարսափելի մի հզօր ալիք ողողեց ողջ Եւրոպան եւ հետագայում իր ազդեցութեամբ եւ կործանարարութեամբ ցնցեց աշխարհը: Այդ փիլիսոփայութիւնը, որն անբացատրելի ձգողութիւն ունէր եւ ունի մարդկանց մի որոշ մասի գիտակցութեան վրայ, իր ձգողականութեամբ շատերին տարաւ իր ետեւից, բայց միաժամանակ սարսափով ընդունեցին Եւրոպայում նոր ուղղութեան՝ նիցշէականութեան ծնունդը, որի առաջնորդը դաժանութիւն էր քարոզում թոյլերի եւ դժբախտների հանդէպ: Այդ ուղղութեան հեղինակը՝ գերմանացի պրոֆեսոր Ֆրիդրիխ Նիցշէն (1844-1900թթ.), 15 տարուց աւելի տառապում էր հիւանդութեամբ՝ տարուրբերուելով մահուան եւ խելագարութեան միջեւ, եւ իր գործերի մեծ մասը նա գրել է այդ շրջանում:

Նրա գլխաւոր գործերից մէկը կոչւում է «Բարուց եւ չարից այն կողմ», որտեղ նա հանդէս է գալիս քրիստոնէութեան եւ ընդհանրապէս կրօնի դէմ, անդրադառնում գերմարդու, տիրոջ եւ ծառայի քարոյականութեան խնդիրներին: Այս աշխատութիւնը մեզ համար հետաքրքրական է յատկապէս նրանով, որ այստեղ Նիցշէն խօսում է քրիստոնէական Եկեղեցու մեծագոյն դէմքերից մէկի՝ Օգոստինոսի մասին՝ համարելով, որ նա ամենավիրաւորական կերպով զրկուած է վեհանձնութիւնից վարուելակերպի եւ կրքերի մէջ:

Օգոստինոսի մասին այսպիսի կարծիքի Նիցշէն հաւանաբար յանգել էր ընթերցելով նրա «Խոստովանութիւնները», որտեղ Եկեղեցական այդ մեծ գործիչը պատմում է միջեւ քրիստոնէութեան

դառնալը իր քաղում թուլութիւնների եւ մեղքերի մասին: Սակայն, ինչպէս կը տեսնենք ստորեւ, դատելով Օգոստինոսին, Նիցշէն ինչ-որ տեղ միեւնոյն ժամանակ դատում էր նաեւ ինքն իրեն եւ իր փիլիսոփայութիւնը: Այդ պատճառով էլ միմեանց զուգադրելով Նիցշէի «Բարուց եւ չարից այն կողմ» աշխատութիւնը, որտեղ քացասական կարծիք կայ Օգոստինոսի մասին, եւ Օգոստինոսի «Խոստովանութիւնները», որի ընթերցումը յանգեցրել է նման կարծիքի, փորձենք ներկայացնել երկու հեղինակների տեսակէտները:

Ի՞նչ է ՄԱՐԴԸ, ՏԻՐՈՋ ԵՒ ԾԱՌԱՅԻ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Նիցշէի տեսակէտը.- Նիցշէն մարդկանց քաժանում է երկու խմբի՝ ուժեղների եւ թոյլերի: Կան մարդիկ, որոնք ի ծնէ տէր են, ունեն տիրոջ հոգեբանութիւնը եւ հետեւաբար նրանց կարեւոր գործը եւ նոյնիսկ պարտականութիւնը իշխելն է: Նիցշէն մտածում էր, որ եթէ նոյնիսկ տիրոջ հոգեբանութեամբ մարդկանց մօտ նրանց այդ առաւելութիւնը շնորհ է, ապա այդ դէպքում եւս իշխելուց հրաժարուելը կամ անձնուրացումը կը լինէր շնորհի չարաշահում: «Այն մարդու, որը նախասահմանուած է իշխելու համար, անձնուրացումը կամ համեստ գիշողականութիւնը կը լինէր ոչ թէ շնորհ, այլ շնորհի մսխում»:

«Մարդը, որը նախասահմանուած է...», գրում է Նիցշէն: Բայց այստեղ հարց է առաջանում՝ ո՞ւմ կողմից է նախասահմանուած: Եթէ Աստծու, ապա Նիցշէն ժխտում է Աստծուն, եթէ բնութեան, ապա այս փիլիսոփան բնութիւնը

համարում է անտարբեր եւ անմասնակից, իսկ կեանքը՝ բազմազանութիւն՝ ի հակադրութիւն բնութեան այդ անտարբերութեան: Ուրեմն ինչպէ՞ս կարող է ինչ-որ բան նախասահմանել ամեն ինչի հանդէպ անտարբեր բնութիւնը:

Այսպիսով, գերմարդու՝ ում կողմից նախասահմանուած լինելու հարցը Նիցշէի մօտ դեռ մնում է անպատասխան, սակայն, ինչպէս յետոյ կը տեսնենք, նա ինչ-որ չափով բացայայտում է այդ նախասահմանողին, ինչպէս նաեւ այն աղբիւրը, որից ներշնչւում էր ինքը:

«Ինչ արդարացի է մէկի համար, բոլորովին չի կարող արդարացի լինել մէկ ուրիշի համար: Բոլորի համար մէկ բարոյականութեան պահանջը վնաս է հասցնում հենց բարձրագոյն մարդկանց: Մարդու եւ մարդու միջեւ կայ աստիճանների տարբերութիւն, հետեւաբար տարբերութիւն կայ նաեւ բարոյականութեան եւ բարոյականութեան միջեւ: (Նիցշէ, նշվ. աշխ., էջ 143): Այսպէս է կարծում Նիցշէն, եւ նրա այս խօսքերի մէջ արդէն նկատւում է բողոքը քրիստոնէութեան դէմ, բողոք, որն աշխատութեան հետագայ էջերում արդէն բացայայտ է եւ նոյնիսկ յարձակողական:

Քրիստոնէութիւնը սիրոյ կրօն է, այն ֆարոգում է, սէր, խոնարհութիւն, հեգութիւն: «Սովորեցէ՛ք ինձանից, որ հեգ եմ եւ սրտով խոնարհ», - ասում է Քրիստոս: Սրանք բանքն են, որոնց հետ երբեք չի կարող հաշտուել Նիցշէի գերմարդը: Նա ձգտում է գերիշխանութեան, մինչդեռ համընդհանուր այս բարոյականութիւնը կապում է նրա ձեռքերը, այս բարոյականութիւնը «վնաս է հասցնում բարձրագոյն մարդկանց»:

Նիցշէն ընդհանրապէս բողոքում է սահմանների դէմ, նրան զայրացնում է այն իրողութիւնը, որ քրիստոնէութիւնը

դրել է յստակ սահմաններ, որոնցից այն կողմ գործելու համար, ըստ քրիստոնէութեան, մարդն ազատութիւն չունի: Նիցշէն ձգտում է անսահմանութեան իր հասկացողութեամբ, եւ նոյնիսկ աշխատութեան վերնագիրը կարծես մի իւրօրինակ բողոք է «քրիստոնէութեան սահմանների դէմ»: Նիցշէն իրեն դնում է այդ սահմաններից այն կողմ, եւ դեռ աւելին՝ այդ սահմաններից վեր: Սակայն մինչ Նիցշէն անսահմանութիւն է փնտռում «Քրիստոնէութեան սահմաններից» այն կողմ, Օգոստինոսն անսահմանութիւն է գտնում «Քրիստոնէութեան սահմանների» ներսում: Եւ պարզւում է, որ Նիցշէն չի հասկացել «քրիստոնէութեան սահմանների» եւ քրիստոնէութեան անսահմանութեան իրողութիւնը:

Իրօք, ի՞նչ ասել է «քրիստոնէութեան սահմաններ»։ Քրիստոնէութիւնը տիեզերական կրօն է՝ տրուած մարդկանց Աստծու կողմից, եւ եթէ քրիստոնէութիւնը արգելւում է որեւէ բան կամ խրախուսւում մի այլ բան, ապա դա չի նշանակում, որ քրիստոնէութիւնը սահմաններ է գծում: Այս պարագային արդէն նման մտածողութիւնն ու տրամաբանութիւնը սխալ է, որովհետեւ քրիստոնէութիւնը ոչ թէ սահմաններ է որոշում, այլ քրիստոնէութիւնը ցոյց է տալիս այն նախապահը, որով պէտք է ընթանայ մարդը: Որոշ համարձակութեան դէպքում ասուածն աւելի պատկերաւոր դարձնելու համար կարելի է, իրրեւ նոյն երեւոյթների նմանութիւն, համեմատութիւն կատարել Տիրոջ մարդկային մարմնի հետ, որը պարունակում է անպարունակելին: Հետեւաբար այստեղ օգտագործուած «քրիստոնէութեան սահմաններ» արտայայտութիւնը չափազանց պայմանական է:

Օգոստինոսի տեսակետը.- Մինչ Նիցզեն մարդկանց բաժանում է երկու մասի՝ իշխող գերմարդկանց և միւսների, Օգոստինոսը մի մարդու մէջ է երկու բաժանումներ անում՝ հին մարդ և նոր մարդ։ Օգոստինոսի ողջ «Խոստովանութիւնների» ընթացքում երեւում է, թէ ինչպէս է հին մարդը, որը հեռու է Աստուծոց, աստիճանաբար վերափոխւում և ընթանում դէպի Աստուած։

Օգոստինոսի մօտ իշխելու և իշխուելու հարց ընդհանրապէս չկայ այն իմաստով, ինչ ենթադրում է Նիցզեն։ Դեռ ընդհակառակը, Օգոստինոսի համար կայ միայն մէկ բարոյականութիւն, և չկայ տարբերութիւն «մարդու և մարդու միջեւ»։ Մարդկային յարաբերութիւններում այս եկեղեցական մեծ գործչի համար իշխելն ընդհանրապէս հարց չէ, և նոյնիսկ անհասկանալի է իշխանութեան նման ձգտումը։

Օգոստինոսի համար մարդը, ինչպիսին էլ որ նա լինի, արդար թէ մեղաւոր, առաջին թէ վերջին, բոլի թէ ուժեղ, մարդ է մեծատառով։ «Իւրաքանչիւր մարդու, քանի որ նա մարդ է, պէտք է սիրել յանուն Աստծոյ։» (*St. Augustin's City of God and christian doctrine*, volume II, edited by Philip Schaff, Michigan, 1983 ("City of God", XIV, 7,1), p. 266):

Մարդը մարդու հանդէպ միայն մի պարտականութիւն ունի, այն է՝ սիրելու պարտականութիւնը։ Այսպէս է կարծում Օգոստինոսը, մինչդեռ Նիցզէի մօտ խօսք անգամ չկայ սիրելու մասին, միւս մարդկանց նկատմամբ գերիշխանութեան ձգտումը և այդ գերիշխանութիւնը ենթադրում է բարձր կանգնածից ներքեւ գտնուողի վրայ նետուած ջնջին արհամարհանք։ Այսպիսի տարբեր մտածողութիւնները գալիս են նրանից, թէ ինչպէս են երկու հեղինակները

հասկանում ճշմարտութիւնը, ըստ որի էլ կատարում են իրենց եզրայանգումները։

Ի՞նչ է ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Նիցզէի տեսակետը.- «Ի՞նչ է ճշմարտութիւնը» հարցին Նիցզէն պատասխանում է. «Ճշմարտութիւնը կին է»։ (Նիցզէ, նշվ. աշխ., էջ 4)։ Բազում հարցեր կան, և ճշմարտութիւնը պէտք է գործադրի իր ողջ ուժերը, որպէս զի յաղթահարի իր յօրանքը՝ ժանձրոյթը, եթէ ստիպուած լինի պատասխանել դրանց։ «Բայց վերջիվերջոյ, չէ՞ որ ճշմարտութիւնը կին է, հետեւաբար պէտք չէ նրա հանդէպ բռնութիւն գործադրել» (Նիցզէ, նշվ. աշխ., էջ 134), - ասում է Նիցզէն։

Յիրաւի փիլիսոփայական խորհրդածութիւն ճշմարտութեան մասին։ Որտեղի՞ց որոշեց Նիցզէն ճշմարտութեան սեռը։ Իսկ գուցէ Նիցզէի այս տեսակետը ոչ թէ մոլորութիւն է, այլ... ծաղրանք, ծաղրանք ճշմարտութեանը։ Ճշմարտութեանը հակադրում է սուտը, ինչպէս լոյսին՝ խաւարը։ Իսկ գուցէ սուտ է նաեւ Նիցզէի ողջ փիլիսոփայութիւնը։ Ճշմարտութեան և ստի պայքարը մարդկային հոգիների համար է, իսկ թէ ով է ստի հայրը, մենք լաւ գիտենք։

Օգոստինոսի տեսակետը.- Ըստ Օգոստինոսի, հաւատը միակ անսուտ աղբիւրն է ճշմարտութեան և փրկութեան։ Բոլոր ժամանակներում մարդիկ, նրանցից յատկապէս փիլիսոփաները, ճշմարտութիւն են փնտռել, գրել են հսկայածաւալ աշխատութիւններ իրենց փնտրտուքների արդիւնքների մասին, սակայն իրական ճշմարտութիւնն այդպէս էլ չեն գտել։ Պատճառը միայն մէկն է՝ մինչեւ բրիստոնէութիւնը ճշմարտութեան վերաբերեալ բոլոր հարցադրումները սխալ են եղել։

Մարդկութիւնը դարերով ցանկացել

է գտնել իրեն տանջող «ի՞նչ է ճշմարտութիւնը» հարցի պատասխանը: Սակայն ճշմարտութիւնը գտնուեց միայն ֆրիստոնէութեան միջոցով, որովհետեւ ֆրիստոնէութիւնը փոխեց սխալ հարցադրումները եւ դրեց բոլորովին նոր, անսպասելի հարցադրում, որով էլ հեշտութեամբ գտնուեց մարդկութեանը տանջող հարցի պատասխանը: Իսկ ի՞նչ արեց ֆրիստոնէութիւնը: Քրիստոնէութիւնը ետ մղեց ճշմարտութեան մասին առարկայական պատկերացումները եւ անձնաւորեց այն:

Ճշմարտութեան վերաբերեալ հարցադրումը փոխուեց հետեւեալ կերպ՝ «Ի՞նչ է ճշմարտութիւնը» հարցի փոխարէն առաջ եկաւ մի աւելի ուժեղ հարց՝ «Ո՞վ է ճշմարտութիւնը»: Եւ հենց այս ճշմարտութեանը հասնելու համար էլ անհրաժեշտ է հաւատը: Օգոստինոսի «Խոստովանութիւնները» իմանում ենք, որ իրեն տանջող բազում հարցերի պատասխանները նա ցանկացել է գտնել ծիցերոնի եւ միւս փիլիսոփաների աշխատութիւնների, մանիքէական աղանդի մէջ, սակայն իրական ճշմարտութիւնը գտել է ֆրիստոնէութեան մէջ: Եւ երբ Օգոստինոսը գտել է ճշմարտութիւնը, ընկել է մի թգեմու տակ եւ լաց եղել: (Օգոստինոս Երանելի, Խոստովանութիւններ, 8, XII, էջ 144:) Ահա այս ձեւով ճշմարտութեանը հասած Օգոստինոսը հետագայում գրելու էր իր «Խոստովանութիւնները» մէջ: «Քո օրէնքը ճշմարտութիւն է (Սաղմ. 118, 142) եւ Դու ճշմարտութիւնն ես» (Յովհ. Ժ Դ 6), (Օգոստինոս Երանելի, Խոստովանութիւններ, 4, IX, էջ 57), եւ Աստծուն կոչելու էր «Լոյս իմ եւ ճշմարտութիւն իմ»: (Օգոստինոս Երանելի, Խոստովանութիւններ, 13, XXIV, էջ 288):

Ն Ի Ց Շ Է Ի Մ Ի Ք Ա Ն Ի
Հ Ա Կ Ա Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր Ը

Նիցշէն դատում է Օգոստինոսին՝ նրան գուրկ համարելով ամենայն վեհանձնութիւնից: Բայց ըստ ինչի՞ է դատում Նիցշէն, ըստ իր փիլիսոփայութեան, թէ՞ ըստ ֆրիստոնէութեան: Եթէ ըստ ֆրիստոնէական ըմբռնումների, ապա ֆրիստոնէութիւնը մեծ տեղ է յատկացնում անգամ ամենայնցաւոր մեղաւորներին, իբրեւ փրկութեան կարօտ մոլորեալ ոչխարների: Բացի դրանից, Օգոստինոսը մեծագոյն դէմք է ֆրիստոնէութեան ողջ պատմութեան մէջ:

«Օգոստինոսի հետ, ի հարկէ, ոչ մի մարդ հաւասարուել չի կարող: Չափազանց մեծ է եղել այդ մարդը, չափազանց անընդօրինակելի», - այսպէս է գնահատել Օգոստինոսին Պետրարկան: Իսկ եթէ Նիցշէն Օգոստինոսին դատում է ըստ իր փիլիսոփայութեան, ապա այստեղ չափազանց սխալում է եւ նոյնիսկ հակադրում է ինքն իրեն եւ իր փիլիսոփայութեանը, քանի որ «Խոստովանութիւններում» հանդէս եկող դեռ ֆրիստոնէայ չդարձած Օգոստինոսն իրենից ներկայացնում է եթէ ոչ ամբողջապէս, ապա գոնէ աճող, պոտենցիալ գերմարդ, որը ձգտում է կեանքից վերցնելու այն ամէնը, ինչն իրեն հետաքրքրում է:

Այս շրջանում նրա մէջ աւելի լաւ կարող էր զարգանալ Նիցշէի գերմարդը, քան թէ կրքերի մէջ վեհանձնութիւնից գուրկ անհատը: Դեռ մանկուց զգացում էր, որ Օգոստինոսը թոյլ մարդ չէ, նա մեծ չափով այն էր, ինչ Նիցշէն համարում է «ի ծնէ տիրոջ հոգեբանութեամբ իշխելու համար ծնուած մարդ», մինչդեռ իշխելու այդ ձգտումն Օգոստինոսն անուանում է յաղթող երեւալու սին ցանկութիւն:

«Խաղերի մէջ պարտուելիս յաճախ

խարդախութեամբ էի ուզում կորզել յաղթանակը՝ դրդուած յաղթող երեւալուսին ցանկութիւնից: ... Ես աւելի շատ վիճում էի, քան զիջում: Եւ սա մանկական անմեղութիւնն է: Օ, ո՛չ, Տէր իմ, ո՛չ»։ (Օգոստինոս Երանելի, Խոստովանութիւններ, I, XIX, էջ 19): Ահա թէ ինչպիսին էր Օգոստինոսը դեռ մանկուց: Հետեւաբար այսպէս դատելով Օգոստինոսին՝ Նիցշէն ինչ-որ չափով դատում է նաեւ իր գերմարդուն, որով էլ եւ իր փիլիսոփայութեանը:

Նիցշէն ասում է. «Ոչ թէ ուժը, այլ բարձրագոյն զգացումների տեւականութիւնն է ստեղծում բարձրագոյն մարդկանց» (Նիցշէ, նշվ. աշխ., էջ 71:) Նիցշէի այս աֆորիզմից կարելի է եզրակացնել, թէ նա դէմ է ուժին, բարձրագոյն մարդու համար բաւական են բարձրագոյն զգացումները: Սակայն այսպիսի կարծիք կարող է ծնուել սոսկ առաջին հայեացքից: «Սնահաւատ կրօնները հիմնական պատճառն են, որ պահպանել են աւելի ցածր աստիճանի վրայ գտնուող մարդկանց, չափից շատ բան են պահպանել այն բանից, ինչը պէտք է ոչնչանար» (Նիցշէ, նշվ. աշխ., էջ 71),- ասում է Նիցշէն՝ քարոզելով թոյլերի եւ թշուառների ոչնչացում:

Նիցշէն Դոստոեւսկուն համարում է իր ուսուցիչը: Նրան յատկապէս դուր էր գալիս Դոստոեւսկու «Ոնիր եւ պատիժը», որտեղ նկարագրում է թոյլի սպանութիւնը: (Նիցշէ, նշվ. աշխ., էջ 240): Բայց ինչո՞ւ է աֆորիզմում Նիցշէն խօսում միայն բարձրագոյն զգացումների մասին՝ անտեսելով ուժը: Պատճառն այն է, որ նա երկու տարբեր բաներ նկատի ունէր, ինչի մասին երբեք բացայայտ չէր ասում՝ բարձրագոյն մարդ եւ գերմարդ: Եթէ ուշադիր լինեմք, կը տեսնենք, որ նրա շատ աֆորիզմներ տիպիկ ինքնակենսագրական են: Այդպիսին է նաեւ այս աֆորիզմը:

Բարձրագոյն մարդը ինքը Նիցշէն է, որը գործ չունի ուժի հետ, նրանք բարձրագոյն զգացումներն են, որոնցով ինքը բարձրագոյն ուսմունք է ստեղծում գերմարդ ստեղծելու համար: Եւ այս «բարձրագոյն» մարդը ծաղրանքով է վերաբերում Օգոստինոսին, ինչին, սակայն, Օգոստինոսն իմաստութեամբ պատասխանել էր դեռ դարեր առաջ իր «Խոստովանութիւններում»։ «Թող ծիծաղեն ինձ վրայ հպարտները, որոնց Դու դեռ ծնկի չես բերել եւ շանթել յանուն իրենց փրկութեան»:

Տ. ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱՅ ՄԱԿԱՐԵԱՆ